րաց ։ Մերձ 'ի սա են աւերակք Խաղախ աւանի յոր֊մէ առեն զկոչումն գաւառիդ, և զայն ըստ ոմանց սակս Թիկնաւէտ մարդկան կողմանն՝ ըստ սովորութեան վրաց անուանեալ, և կամ վասն նախնի բնակութեան Ուսպելեանց Ճենաց, որպէս թէ Ճենաց Խազախս անուանիլ ։

160 · Գլխաւոր գեօղք կողմանցս են Կօթի, Մէնէքէնդ, Տիւի, Ճարխէլ առ Զարթակլը լերամբք, առ որով և Հաղարծին գեօղ և անուանի մենաստան նորին՝ պայծառացեալ ԺԺԲ դարու յառաջնորդութեան Խաչատրոյ վարդապետի՝ որ երգեացն զխորհուրդ խորին երգ. եկեղեցին և մատրունք նորոգեալք կանգունք կան, և 'ի միում յայնցանէ են հանգստարանք Թագաւորաց Գագկայ և Գորգեայ ։ Ցելից Զարտակլը լերին յոստս այլոյ անտառախիտ լերին Զաւըր կոչեցելոյ մերձ յԱչաջուր գեօղ՝ կայ հրաշակերտ մենաստանն Մաքարայ վանք գեղադիտակ դրիւք, քարեղէն քանդակօք և պատկերօք դրուագեալ վեհագոյն ամենայն մերձակայ վանորայից, այլ ամայի վասն դժուարամատոյց տեղւոյն. և գամբանք խաչազարդք շուրջ զնովաւ ։ — Ի հիւսիսոյ արևելից սորա և մերձ 'ի Գաւառզին 'ի վերայ աղբերնի Ճանապարհին Տփխեաց կայ Ճօղաղ կամ Բիբիս աւան յ'2200' բարձու. 'ի մօտոյ նորա Կօնէն առ աւերակօք հնոյ քաղաքի կամ աւանի, և Կիրանց վանաց ։ Ցելից սոցա ցԿուր գետ նշանաւոր գեօղք են Դաշ-Սէլահօղլու և Նոր Սէլահօղլու ռուսաշէն, Աթ-Գօյունլու, Գարաֆօյունլու, Տաղ Քէսէմէն և Աղստաֆա՝ առ գետովն, յորոյ անուն և գետս և գաւառս կոչէր 'ի հնումն ։ — Ի կողմանքս յայս և յայլ գաւառս նահանգիս բնակեն Նորաղանդ Ռուսք հերձուածք յեկեղեցւոյ նոցա՝ Մալէքան և Տոխոպօրեց կոչեցեալք ։

161 · Բ · ՇԱՄՇԱՏԻԼ գաւառ որ և ԱՄԻՐ ՇԱՄՇԱՏԻՆԼՈՒ, 'ի հարաւոյ Խազախայ կայ, ընդ մէջ Սևանայ և Կուրայ, և ձգի ընդ հարաւ ցՃէկիր գետ, որով անջրպետի յԱյրումայ և 'ի Գանձակայ ։ Ի լերանց որ յարևելից Սևանայ հոսեն 'ի Կուր՝ 'ի գաւառի աստ՝ Հասանսու, Թովուզսու, Մրղուզսու, Ջաջէմսու, և այլն. և Թարս հակառակ այլոցն հոսանաց ընդ հիւսիս իջեալ՝ խառնի յԱղստեւ ։ Ի հնումն արևմտեան կողմն գաւառիս մասն էր Արցախոյ՝ ԿՈՂԹ գաւառ նորին, Թերևս և ԲԵՐԴԱՁՈՐ կամ ԲԵՐՁՈՐ, իսկ արևելեանն մասն Ուտիոյ՝ ԳԱՐԴՄԱՆ գաւառ. և 'ի բնակչաց գաւառին ցարդ Ուտիացիք կամ Աղուանք սեփական լեզուաւ, զոր և Ուտիք կոչեն, յորոց են և ոմանք յայնկոյս Կուրայ 'ի բնիկ Աղուանս ։ Ի միջին դարս որպէս և ցարդ՝ յայլ նոր վիճակս տրոհեալ է գաւառս, այսինքն են՝ ՄԻԱՓՈՐ, ՏԱՒՈՒՇ և ՋԱԿԱՄ, և միանգամայն ՍԵՒՈՐԴԵԱՑ ԱՇԽԱՐՀ կամ ՁՈՐ կոչեցեալ, յորս բնակեն Թաթարք և Հայք ։ — Ի միջի Աղստև և Հասան գետոց նշանաւոր գեօղք են Ալլահվէրդի 40 հայ տամբք, Քէրվանսէրայ 70 տամբք, Հասանգայա կամ Հասանաքի, և այլն. և 'ի հնոց տեղեաց աստ թուին լինել Հինն Գէթիկ (159), և բերդն Տէրունական ուր նստէին Կորիկեան Թագաւորք, նոյնպէս և 'ի Նոր-Բէրդ, և մերձ սմին Վարդաֆայ Ս. Նշան մենաստան տակաւին կանգուն ։ — Ընդ մէջ Հասանայ և Մրղուզ ջրոյ որ յանուն լերինն բարձու (7), նշանաւոր տեղիք են Զօրն Տաւուշայ, յորում և ցարդ կան Թօվուզ Գալէ և Թովուզ գեօղք, որոց մին Տաւուշ Թուի՝ յորմէ էր մեծ վարդապետն Վանական ԺԳ դարու, և միւս Տաւշ՝ յորմէ Յովհաննէս Տուեցի ժամանակակից նորին ։ Աշոտ Երկաթ սիրէր յոյժ զկողմանքս և բազում անգամ նստէր 'ի Տաւուշ, և աստ մարտեաւ ընդ աներոյ իւրում Սահակայ, և ապա ընդ Ցլիկն Ամրամայ ։ Մերձ 'ի Տաւուշ և 'ի Զօրաբան գիւղ է Խորանաշատ վանք զոր շինեաց Վանականն վարդապետ, որում հուպ էր Երգէվանից բերդն. և ոչ հեռի թուի Մածնաբերդն, ամենեքին սոքա անուանիք 'ի ԺԱ-ԺԳ դարս, վասն բնակութեան Կորիկեանց պայազատացն Բագրատունեաց և նուաճմանն 'ի Թաթարաց ։ — Ցելից Տաւուշոյ 'ի աելցա կամ յանկիւնաձև ջրապատ երկրի զոր գործեն գետքն Տաւուշ, Ինճէ և Կուր՝ բնակեն Ուտիացիք 'ի Կըռչէն գեղջ և 'ի սահմանսն ։

162 · Ընդ մէջ Մրղուզ լերին և գետոյ և Ճէկիր գետոյ կայ ՋԱԿԱՄ երկիր, որոյ հիւսիսային արևմտեան կողմն ՂԱՐԱՂՈՒ ԵՐԿԻՐ կոչի, ուր յաւուրս գերեվարութեան Շահաբասայ բնակեցան Գեղամեցիք. 'ի հնումն թուի ՍԱԳԱՄ կոչեցեալ վիճակիս և Գարդմանայ գաւառի Ուտիոյ մասն լեալ. աստ էին ձմերոցք Թագաւորաց Հայոց 'ի ջերմահովիտ լեռնաձորոց մերձ 'ի դաշտն Աղուանից, այսինքն Կուր գետոյ, և առ եզերբ Ջակամայ կայ ցարդ Խալխալլը գիւղ, որ թուի ունել զտեղի ԽԱՂԽԱՂ ձմեռնահանգիստն քաղաքի Թագաւորացս մերոց Արշակունեաց, ուր Անակ Պարթև յանդիման եղև Խոսրովու մեծի. և 'ի հանդիպոյ դաշտին եհար մեծն Վարդան զՊարսս՝ 'ի գալ նոցա 'ի Դրանէն Ճորայ 'ի Հայս, առ ափամբք Լօփնաս կամ Լոբանաս գետոյ, որ թուի մի 'ի վտակաց Ջակամայ, կամ ինքն իսկ ։

163 · Գ · ԱՅՐՈՒՄ գաւառ ունի զարևմտեան հարաւային մասն նահանգին, զլեռնակողմն, յականց Ջակամայ և 'ի Ճկեր գետոյ և 'ի վայր, և է ԲԵՐԴԱՁՈՐ գաւառ հնոյն Արցախայ, Թերևս մասամբ Կողթայ. 'ի միջին դարս կոչեցեալ ԾԱՐայ երկիր, և այժմ ԱՅՐՈՒՄ և ԽՈՋԽԱՐԱ կամ ՂՕՁՂԱՐԱ վիճակք. առաջին անունդ առուգաբանի յոմանց Հայ-Հոռոմ, կամ անուն է տոհմի Թաթարաց Այրումլու կոչեցեալ, իսկ երկրորդն թուի Խաչէքար յանուն լերին, յորմէ բղխէ գետ համանուն, և 'ի հարաւոյ նորա գետն Գանձակայ. իսկ 'ի հիւսիսոյ գետն Շէմքօրայ, և 'ի նորա հիւսիսոյ՝ Ճէկիր գետ ։ Առ ակամբք Շէմքօրայ, 'ի թիկանց Սոթից գաւառին Սիւնեաց (148) կայ Ծար աւան, զոր յիշէ Մագիստրոս ։ Ի սկիզբն ԺԴ դարու շինեցաւ 'ի սմա մենաստան հոյակապ, որ և ամայի կայ. և դարու յառաջ յաւանէ աստի Դաւիթ ոմն մոլորեցուցիչ համբաւեաց զանձն Քրիստոս, և զբազումս խարդաւանեալ, հերքեցաւ 'ի գլխոց վարդապետաց ժամանակին ։ — Ի հիւսիսոյ Ծարայ յոստս Բաշ Գեօրգէն կոչեցեալ լերանց կան Շիշկահանք որ են հանք պղնձոյ ։ — Ի հարաւոյ ելից սոցա 'ի սպառուածս կոյս լերանցն ձգելոյ 'ի դաշտն Կուրայ՝ կան վանորայք ինչ և անապատք անուանիք 'ի Ե դարու